ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 13.02.2017թ. ԹԻՎ 63-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-01/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

28 փետրվարի 2017թ.,
ժամը 11:30

Մասնակցում էին.
<u>Հանձնաժողովի անդամներ</u>՝
Հ Աղաջանյան ԴԾ պետ
Ա. Ալավերդյան ՆԾ պետ
<u>Հանձնաժողովի քարտուղար</u>
Գ. Սարգսյան ՊԳՀԾ գնման համակարգող

Հանձնաժողովի նախագահ ՊԳՀԾ պետ Վ.Չիլինգարյանը նիստին չէր մասնակցում

Օրակարգ՝

1. Ընկերության կարիքների համար մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայությունների ձեռքբերման <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և համապատասխանող գնահատված հայտերի բացում.

2. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

3. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում:

Նիստը հայտարարվեց բացված և հրապարակվեցին սույն ընթացակարգի չափաբաժնում ներառված բոլոր ենթակետերի համար սահմանված առավելագույն գները.

Չափաբաժին	Ծառայության անվանումը		Ենթակետերի համար սահմանված առավելագույն գինը
1	***Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ, այդ թվում.***		-
	1.1**	Ավիատրանսպորտով մեկ մատակարարի կողմից առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	102000
	1.2**	Փոստով առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	72000
	1.3**	Վերգետնյա տրանսպորտային միջոցով, մեկ մատակարրարի կողմից առաքված/արտահանվող բեռի յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար	90000
	1.4**	Մաքսային մարմինների կողմից հայտարարագրման ընթացքում պահանջվող այլ փաստաթղթերի ձևակերպում, ինչպես նաև պատվիրատուի հանձնարարության դեպքում և ըստ անհրաժեշտության բեռների սերտիֆիկացման հետ կապված այլ գործողություններ	18000

Ընդ որում, ծառայության մատուցման արժեքը 2017թ. համար չպետք է գերազանցի 1 500 000 ՀՀ դրամը:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը՝ <<Դիպյու>> ՍՊԸ (հասցե՝ ք. Երևան, Դեղատան փողոց, 13 շենք, բն.8, հեռ. 091462200):

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ <<Դիպյու>> ՍՊԸ ներկայացրած ծրարը համապատասխանում է այն կազմելու և ներկայացնելու սույն հրավերով սահմանված պահանջներին և բացեց <<Դիպյու>> ՍՊԸ կողմից ստացված ծրարը:

Գնահատող հանձնաժողովը ստուգեց և արձանագրեց, որ <<Դիպյու>> ՍՊԸ ներկայացրած ծրարում առկա են նաև մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովն ամրագրեց, որ <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն, հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է չափաբաժնում ներկայացված գների հանրագումարի արդյունքում ձևավորված գնային առաջարկով:

Հրապարակվեց <<Դիպյու>> ՍՊԸ գնային առաջարկը.

Չափաբաժին		Ծառայության անվանումը	<<Դիպլու>> ՍՊԸ գնային առաջարկը
1	***Մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություններ, այդ թվում.***		
	1.1**	Ավիատրանսպորտով մեկ մատակարարի կողմից առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	102000
	1.2**	Փոստով առաքված/արտահանվող բեռի մաքսային ձևակերպում	72000
	1.3**	Վերգետնյա տրանսպորտային միջոցով, մեկ մատակարրարի կողմից առաքված/արտահանվող բեռի յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար	90000
	1.4**	Մաքսային մարմինների կողմից հայտարարագրման ընթացքում պահանջվող այլ փաստաթղթերի ձևակերպում, ինչպես նաև պատվիրատուի հանձնարարության դեպքում և ըստ անհրաժեշտության բեռների սերտիֆիկացման հետ կապված այլ գործողություններ	18000

<u>Հանձնաժողովը քննարկման արդյունքում միաձայն որոշեց.</u>

1. Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Դիպլու>> ՍՊԸ -ին,

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել <<ՀԱՆ-ՊԸԾՁԲ-01/17>> ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 7.5 կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումը,

3. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 2017 թ.-ի մարտի 6-ին ժամը 11:30, ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33, <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ վարչական շենքում:

Հ Աղաջանյան — Հանձնաժողովի անդամ

Ա. Ալավերդյան — Հանձնաժողովի անդամ

Գ. Սարգսյան — Հանձնաժողովի քարտուղար